Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

Շիրակում XXդ. առաջին երկու տասնամյակներին, սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված, ցանքատարածությունների մակերեսն անընդհատ փոքրացավ: Այսպես, եթե 1913թ. Հայաստանում մշակվել է 345,7 հազ. հա հողատարածք, 1919թ.՝ 82,7 հազ. հա, իսկ 1969թ.՝ 679,9 հազ. հա[1], ապա Շիրակում համապատասխանաբար 40 հազ. հա, 8 հազ. հա[2] և 85,8 հազ. հա[3]: Երկրագործական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար կառավարությունը 1920թ. ստեղծեց գյուղատնտեսության և գույքի նախարարություն: Երկրագործական աշխատանքներն աստիճանաբար կարգավորվում էին: Սակայն, թուրքական բանակը կրկին ծանր հարված հասցրեց Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիությանը և համանուն քաղաքի բնակչությանը՝ 1920թ. նոյեմբերին ներխուժելով Հայաստան: Միայն Փամբակի գյուղերից Թուրքիա տարվեցին 24303 գլուխ խոշոր և 96704 գլուխ մանր եղջերավոր անասուն, 6296 գութան և արոր, 527927 փութ ալյուր[4]: Այդ ամենն արվում էր տեղի բնակչությանը և գաղթական հայերին սովամահության մատնելու համար: Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության նյութերից պարզվում է, որ Դուզքյանդի գավառակում (ներկայիս Ախուրյանի տարածաշրջան) ցանքս չունեցող 31 տնտեսություններից 27-ը «ինչ ու ցանքս չունեք» հարցին պատասխանել են՝ «լծկան, սերմացու ու ինվենտար չունենք»: Նույնպիսի պատասխան են տվել նաև Մռլլա-Գյոքչա (ներկայիս Անիի տարածաշրջան) գավառամասի 30 տնտեսությունից՝ 29-ը, Թալինի գավառամասի 28 տնտեսությունից 16-ը, Հաջի-Խալիլի (ներկայիս Ծաղկահովիտի տարածաշրջան) գավառամասի 21 տնտեսությունից՝ 19-ը[5]:

Խորհրդային առաջին տարիներից արմատապես փոխվեց գյուղատնտեսական քաղաքականությունը: 1920-30-ական թվականները կարելի է բնութագրել, որպես սոցիալիստական ազգարային հեղափոխության տարիներ: Հայաստանում, նաև Շիրակում ավանդական բնամթերային երկրագործությունից անցում կատարվեց առաջադիմական սոցիալիստական ապրանքային երկրագործության: Փոփոխություններ տեղի ունեցան նախնառաջ հողատիրական հարաբերություններում: Գյուղացիական հողատարածքներն ազգայնացվեցին: Խորհրդային Հայաստանի, այդ թվում՝ Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի իշխանությունների գերխնդիրն էր վերականգնել հանրային տնտեսությունը՝ հասցնելով այն 1913թ.

---

[1] *Սովետական Հայաստանը 50 տարում. Եր., 1970. էջ 111:*

[2] *Միքայելյան Վ., Հողային հարցը եւ գյուղացիության դրությունը Հայաստանում 1917-1920թթ. Պատմաբանասիրական հանդես (այսուհետ ՊԲՀ), Եր., 1960, N 1, էջ 122:*

[3] *Սովետական Հայաստանը 50 տարում. էջ 119:*

[4] *Միքայելյան Վ., Հողային հարցը եւ գյուղացիության դրությունը Հայաստանում 1917-1920թթ., ՊԲՀ, N1, Եր., 1960, էջ 115:*

[5] *Մարուխյան Ա., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները հայկական գյուղում. Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N5, էջ 10, Եր.,1948*

մակարդակին: Այդ դժվարին գործընթացն սկսվեց նոր տնտեսական քաղաքականության կենսագործումով[6]:

Եպեսս փոխվեց բուսաբուծության զարգացման ընթացքը: Ընդունված հողային օրենսգրքի համաձայն գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի անմիջական օգտագործման իրավունքը վերապահվեց հողագործներին և նրանց միություններին, քաղաքային բնակավայրերի բնակչությանը և պետական ձեռնարկություններին: Օրենքով արգելվեցին հողի առք ու վաճառքը, կտակելն ու գրավ դնելը: Թույլատրվեցին հողի վարձակալություն և օժանդակ վարձու աշխատանքի օգտագործում: Հողային հասարակություններում կամ գյուղական համայնքներում հողը ենթակա էր դառնում պարբերական վերաբաժանման 9 տարի ժամկետով, և հավասարության՝ ըստ ծխերի՝անդամների թվի համաձայն շնչաբաժին նորմայի: Չնայած այդ քայլերին՝ գավառում գյուղացիների շերտավորումը և շահագործումը պահպանվում էր[7]:

Ալեքսանդրապոլի գավառում հողային հարցի լուծումը դժվար էր նաև ազատ հողերի բացակայության պատճառով: Ուստի հողի շնչաբաժնի նորման կրճատվեց: Խնդրին լուծում տալու համար որոշվեց ստեղծել կոոպերացիոն գյուղացիական տնտեսություններ: 1924թ. ՀԽՍՀ Կենտգործկոմի կողմից ընդունված դեկրետով գյուղացիական կոոպերացիաներում կարող էր ընդգրկվել 15-ից ոչ պակաս գյուղացիական տնտեսություն[8]: 1927թ. դրությամբ գավառում գյուղկոոպերացիաները 41 էին և միավորել էին 5417 գյուղացիական տնտեսություն, ինչը Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիական տնտեսությունների 20,4%-ն էր[9]: Նշված տարում կաթարտել կոոպերացիային էին միացել 15841 տնտեսություն, 28-ը թոչնաբուծական ընկերության անդամ էին, 4198-ը օգտվել են վարկընկերության ծառայությունից, կազմավորվել էին հողօգտագործման, ոչխարաբուծական և մեղվաբուծական ընկերություններ[10]: Գյուղատնտեսության, մասնավորաբար, բուսաբուծության զարգացման գործոններից մեկը եղավ գյուղատնտեսական ՓՕԿ-ի (փոխադարձ օգնության կոմիտե) կազմավորումը: 1927թ. Ալեքսանդրապոլի գավառում ՓՕԿ-երի թիվը 197 էր, նրանցում աշխատողների թիվը 1368[11]: Գյուղատնտեսության կոոպերացմանը հաջորդեց կոլեկտիվացումը:

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից երևում է, որ պայմանավորված հիմնականում կոլեկտիվացման գործընթացով՝ նշված ժամանակահատվածում կտրուկ փոփոխվել է տարբեր տեսակի գյուղացիական տնտեսությունների ցանքատարածությունների մեծությունը: Մենատնտեսներից խլված բազմաթիվ հողատարածքներ հանձնվել են կոլեկտիվ տնտեսություններին:

---

[6] *Հակոբյան Ա., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին (1921-1925թթ.), ՊՀՇ, N 3, Եր., 1980,էջ 31:*

[7] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, g.1, գ.41,թ.49:*

[8] *Թամրազյան Բ., Սովետական Հայաստանում գյուղատնտեսական մտավորականության կազմավորման պատմությունից (1921-1925թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, h.6(546), Եր., 1988, էջ 32:*

[9] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, g.1,գ.7, թ.110:*

[10] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, g.1,գ.7, թ.110:*

[11] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, g.1,գ.7, թ.97*

Աղյուսակ 1

Ցանքատարածությունը Լենինականի շրջանում 1933-1935թթ.[12]

	1933թ.		1935թ.					
	աշխանացան ցորեն	գարնանացան ցորեն	աշխանացան ցորեն	գարնանացան ցորեն	կարտոֆիլ	շաքարի ճակնդեղ	կտավատ	կերակրախոտ
կոլտնտեսություն	2875	4544,7	5141,0	17212	529	362	854	694
խորհտնտեսություն	645	859,0	969,0	1639,0	522	355	1	880
մենատնտեսություն	727,7	8280,0	469,2	4686	86	-	110	-
Ընդամենը	4247,2	13683,7	6579,2	23537	1137	717	965	1574

Խորհրդային տարիների սկզբին փոխվեցին գյուղական համայնքների և գյուղացիական տնտեսությունների տեսակները, ինչը նույնպես ազդեց երկրագործական աշխատանքների կազմակերպման վրա: Շիրակում տնտեսվարում էին գյուղացիական տնտեսությունների տարբեր տեսակներ: Դրանցից էին՝ խորհրդային տնտեսությունները, աշխատանքային արտելները, մերձքաղաքային գյուղացիական կոոպերացիոն տնտեսությունները, կոլեկտիվ տնտեսությունները, մենատնտեսությունները և այլն: 1932թ. Լենինականի շրջանի 20,4 հազ. հա գյուղատնտեսական հողատարածքից 683 հա բաժին է ընկել տրեստավորված խորհրդային տնտեսությանը, 93,5-ը՝ մերձքաղաքային կոոպերացիոն տնտեսությանը, 6477-ը՝ կոլտնտեսությանը և 13160-ը՝ մենատնտեսությանը[13]:

Սկզբնական շրջանում վերափոխման մեջ որոշակի առաջնայնություն ունեցավ պետական խոշոր գյուղացիական տնտեսությունների՝ խորհրդային տնտեսությունների (սովխոզների) կազմավորումը: Լենինականում խորհրդային առաջին տնտեսությունը հիմնադրվել է 1929թ., այնտեղ հիմնականում մշակել են հացահատիկային բուսատեսակներ և շաքարի ճակնդեղ: Ի դեպ, առաջին փորձերից պարզվեց, որ մշակվող ճակնդեղի շաքարի պարունակությունը Շիրակում 19,5% է, այն դեպքում, երբ Կուրսկում՝ 17,5, իսկ Վրաստանում՝ 14% էր[14]:

Կարճ ժամանակահատվածում զգալի չափով բարձրացավ խորհտնտեսությունների տեխնիկական զինվածությունը, էապես ավելացավ շարքացանների և կալսիչների թիվը[15]:

1931-1933թթ. շրջադարձային եղան մենատնտեսության համար: Նշված ժամանակահատվածում մենատնտեսություններին պատկանող ցանքատարածու-

---

[12] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9. ց. 1. գ. 153. թ. 13. ֆ. 9. ց. 2. գ.200. թ. 98-121:*

[13] *Նույն տեղում գ.102, թ.36:*

[14] *Վիրաբյան Ա., Ուրվագծեր Հայաստանի ոռոգման պատմության. Եր., 1986. էջ 147:*

[15] *Ղազախեցյան Վ., Սովխոզային շինարարությունը Հայաստանում 1921-1930թթ., Հայկական ՍՍՌ գիտությունների տեղեկագիր. ՀՅ. Եր., 1961. էջ 3:*

թյունները նվազեցին 4,8 հազ. հա-ով կամ 36,6%-ով՝ 13,1 հազ. հա-ից[16] հասնելով 8.3 հազարի: Լենինականի շրջանում այդ տարիները բնութագրվում են իբրև համատարած կոլեկտիվացման տարիներ, երբ ունևոր գյուղացիները կամ «կուլակները» որպես սոցիալական խումբ դադարեցին գոյություն ունենալուց: 1920-ական թվականներին գործնական նշանակություն ստացավ կուլակին որոշելու, նրա չափանիշները սահմանելու հարցը: Հարցի լուծումը կարևորվեց, երբ իշխանությունը սկսեց տարբերակված հարկային քաղաքականություն վարել գյուղացիության սոցիալական շերտերի նկատմամբ. չքավորներն ազատվում էին հարկերից, միջակները հարկվում էին չափավոր, իսկ հարկի հիմնական ծանրությունը դրվեց ունեվոր կուլակային տնտեսությունների վրա: Գործում էին մի քանի հարկատեսակներ՝ հավասարեցման հարկ, եկամտահարկ, դասային հարկ, վերչափ, գյուղմիասնահարկ և այլն: Տուրքերից կարելի է առանձնացնել իրավաբանական ծառայությունների և անասունների համար վճարվող գումարները և անշարժ գույքի ու անասունների համար վճարվող տեղեկանքների դիմաց արվող մուծումները: Միանվագ տուրք գանձվում էր շուկաներից և առևտրի համար հատկացված վայրերից: Միանվագ տուրքից ազատվում էին այն գյուղացիները, որոնք վաճառում էին իրենց տնամերձից ստացած բերքը, ինչի համար պետք է ունենային գյուղխորհուրդների և քաղխորհրդի կողմից տրվող վկայական[17]:

1926-27 տնտեսական տարում Ալեքսանդրապոլի գավառում գրանցվեց գյուղացիական մթերքների գների իջեցում, մասնավորապես, կարագի գինը նվազեց 18%-ով, շաքարինը 6,4, բրնձինը 10, տավարի մսինը 9 և ոչխարի մսինը 7,5%-ով: Գյուղմթերքների գների անկման պատճառը նախնառաջ պետության կողմից իրականացվող գնագոյացման քաղաքականությունն էր. վերացել էր գյուղմթերքներ վերավաճառող կազմակերպություններից մի մասը, նվազել էին գյուղմթերքների առք ու վաճառքով զբաղվող պետական կազմակերպությունների վարչական ապարատի ծախսերը: Մինչ այդ գյուղմթերքը քաղաքային սպառողին հասնելու համար անցնում էր գործարան-սինդիկատ-կենտրոնական միություն-Անդրկովկասյան կոոպմիություն-Հայկոոպ-Բանկոոպ շղթան, որը թանկացնում էր վերամշակում անցած գյուղմթերքը միջինը 25-30%-ով[18]:

Գավառի գյուղատնտեսության, հատկապես բուսաբուծության զարգացման մեջ առանցքային նշանակություն ունեցան վարկային ընկերությունները, որոնք հիմնականում վարկ էին տրամադրում չքավոր և աղքատ գյուղացիական տնտեսություններին լծկան անասուն և սերմացու ձեռք բերելու համար: Վարկավորում էին ոչ միայն պետական բանկային հաստատությունները, այլն հարուստ գյուղացիները: Խորհրդային իշխանությունը, վերջինս համարելով վաշխառություն, քրեորեն պատժելի արարք, խոչընդոտում էր դրան առաջ բերելով հարուստ գյուղացիների դժգոհությանը, քանի որ նրանք զրկվում էին շահույթ ստա-

---

[16] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ. 9, ց. 1, գ. 102, թ. 22:*
Նույն տեղում, գ. 6, թ. 43:
Նույն տեղում, գ. 7, թ. 96:

նալու հնարավորությունից[19]: Դիմադրությունը ծայրահեղ բնույթ ստացավ, երբ մեծահարուստ գյուղացիներին արգելվեց ընտրություններին մասնակցել՝ զրկելով նրանց իշխանություն ձևավորելու հնարավորությունից:

Ըստ Լենինականի գավառային գործադիր կոմիտեի զեկուցագրերի տվյալների՝ բուսաբուծությունը 1920-ական թվականների երկրորդ կեսին գավառի տնտեսության զարգացման առաջատար ճյուղն էր: 1926-27 տնտեսական տարվա բնակլիմայական անբարենպաստությամբ (երաշտ, կարկուտ) պայմանավորված բուսաբուծությանը գավառում մեծ վնաս կրեց[20]: Ընդհանուր առմամբ, 1920-ական թվականները գավառում հացահատիկի ցածր բերքատվության տարիներ եղան: Դրա պատճառը ինչպես ցանքատարածությունների նվազումն էր, այնպես էլ ցածր արտադրողականությունը: 1920-1930-ական թվականներին գավառում նկատելի անկում ունեցավ նաև կտավատի արտադրությունը՝ պայմանավորված ինչպես էլեկտրաֆիկացումով (կտավատի ձեթը ճրագալույսի հումքն էր), այնպես էլ Ռուսաստանից արևածաղիկի ձեթի ներմուծման ծավալների ավելացմամբ[21]: Իսկ 1927-1935թթ. հացահատիկի ցանքատարածության նվազման հիմնական պատճառը կոլեկտիվացումն էր, որը մենատնտեսներին զրկեց սեփական հողատարածքներից: Բնականաբար, այդպիսի պայմաններում հացահատիկային բուսատեսակների արտադրության համախառն արդյունքը պակասելու էր[22]:

1920-ական թվականներին հացահատիկային բուսատեսակների բերքատվությունը բարձրացնելու համար ստեղծվում են փորձադաշտեր և սերմադաշտեր: Ագրոարդյունաբերական անձնակազմի կողմից գավառի 32 գյուղերի 123 տնտեսություններում 120 դեսյատինի վրա ցանվում էին 12 տեսակի ցորեն, 10 տեսակի գարի և 2 տեսակի վարսակ[23]: 1932թ. երկրագործական աշխատանքները կազմակերպելու գործում կարևորվել է, այսպես կոչված, սերմֆոնդերի ապահովումը, ինչը որոշ դեպքերում հարուցել է գյուղացիների և գյուղում բնակվող բանվորների մի մասի դժգոհությունը, որոնք հրաժարվել են կատարել սերմֆոնդի գծով իրենց առաջադրանքը:[24]

Շիրակը հանրապետության միակ շրջանն էր, որ բավարարում էր ցորենի ներքին պահանջարկը: Լենինականի գավառում 1925-1926 տնտեսական տարում հացահատիկային ցանքատարածությունը կազմել է 66456 հա: Մեկ հեկտարից ստացված բերքի քանակը (8.2ց) զիջում էր հանրապետական միջին ցուցանիշին: Արժե հիշատակել, որ 1925-1926 տնտեսական տարում գավառի գյուղական բնակչության մեկ շնչին միջինը բաժին է ընկել 208կգ հացահատիկ, իսկ քաղաքում

---

[19] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9. ց. 1, գ. 7, թ. 104:*
[20] *Նույնը:*
[21] *Նույն տեղում, ֆ. 9. ց. 2. գ. 117, թ. 1:*
[22] *Նույն տեղում, ֆ. 9. ց. 1, գ. 7, թ. 110:*
[23] *Նույն տեղում, թ. 100:*
[24] *Նույն տեղում, գ. 144. թ. 16:*

176կգ[25]: Տարեկան միջինը ցանվել է 9.2 հազ. տ ցորենի և 1.3 հազ. տ գարու սերմացու:[26] Ցորեն ցանվել է բոլոր գավառակներում (տե՛ս աղյուսակ 2):

Բուսաբուծության զարգացման վրա ազդող կարևոր գործոններից էր գյուղատնտեսական կրթության կազմակերպումը: Երկրագործական աշխատանքները նոր՝ ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ 1922թ. Ալեքսանդրապոլ քաղաքում տեխնիկումի բացումը, որի գյուղատնտեսական բաժանմունքում սովորում էր 23 ուսանող[27], որոնց փորձառություն ձեռք բերումն ապահովելու համար գավգործկոմը նրանցից 9 հոգու աշխատավարձ հատկացնելով ուղարկեց գավառակի գյուղերը:[28] Անցկացվում էին գյուղատնտեսական դասընթացներ, որոնց մասնակցում էին հազարավոր ունկնդիրներ:

Բուսաբուծության զարգացման ընթացքումկարևոր նշանակություն ունեցավ ջրանցքների կառուցումը: Շիրակի ջրանցքն այդ տարիներին մեր հանրապետության ամենախոշոր ջրաշինարարական կառույցն էր: Ջրանցքն սկիզբ էր առնում Ախուրյան գետից (Կապս գյուղի մոտերքից) ուներ 21կմ երկարություն: Նրա շինարարության աշխատանքներն ավարտվեցին 1929թ.: Ջրանցքը հնարավորություն ընձեռեց ոռոգելու շուրջ 10հազ հա անջրդի հողեր[29], նպաստեց նոր բուսատեսակների, մասնավորապես շաքարի ճակնդեղի մշակությանը: Կառուցվեց նաև Գեղարոտ գետից սկիզբ առնող մի այլ ջրանցք: Այն տեղը, որտեղից սկիզբ է առնում ջրանցքը, գյուղացիները մինչև օրս անվանում են «Ռուսի բանդ»:[30]

Լենինականի գավառում հացահատիկային գյուղատնտեսական աշխատանքները հիմնականում սկսվում էին գարնան սկզբին և շարունակվում մինչև ամառվա վերջը, որից հետո երկրագործը հողը մշակելով չէր զբաղվում: Այդ բացը լրացնելու համար գյուղացիների համար տեղական իշխանությունները կազմակերպում են ցուցադաշտեր և ցուցահողամասեր, որտեղ ցույց էր տրվում աշնանացան ցորենի մշակության կարևորությունը: Ներկայացնում էին ցանքաշրջանառությունը և մշակման տեխնիկան: 1927թ. գավառում կազմակերպվում է 149 գյուղացիական ցուցահանդեսներ, որոնց հիմնական նպատակն էր ցուցադրել գյուղացիությանը շաքարացանի, սերմացանի, սերմերի ախտահանման առավելությունները:

Լենինականի շրջանում 1931-1932 տնտեսական տարում տրեստավորված խորհրդային տնտեսությունները մշակել են 673հա հողատարածք, հիմնարկ ձեռնարկությունների ենթակայության տակ գտնվող գյուղացիական տնտեսությունները 10, կոլեկտիվ տնտեսությունները 6477 և մենատնտեսությունները 13160 հա, մերձքաղաքային կոոպերացիայի տնտեսությունները 93.5 հա հողատարածք: Բերված թվերից երևում է, որ կոլեկտիվացման գործընթացը չի ավարտվել և հողատարածքների զգալի մասը մշակել են մենատնտեսները:

---

[25] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց.1,գ. 5, թ.1-2:*
[26] *Նույնը:*
[27] *Թամրազյան Բ., նշվ. աշխ., էջ 33-34:*
[28] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց.1,գ. 7, թ.104:*
[29] *Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 147:*
[30] *Դաշտային ազգագրական նյութեր, տետր 1, Գյումրի, 2014:*

Աղյուսակ 2

Լենինականի գավառակների 1925-1926թթ. գյուղատնտեսական տարվա փաստական բերքի քանակը(ց/հա) ըստ գավառային փորձագիտական հանձնաժողովի տվյալների /հաշվարկը ց/հա-ով/

գավառակ	Ցորեն ց/հա		գարի	կտավատ	խոտ ց/հա		Ծանոթություն
	աշնանացան հա	գարնանացան			բնական	ցանովի	
Դուզքյանդ	7,2	5,8	8,7	5,8	6,5	50,1	ա/Դուզքյանդի փորձադաշտի աշնանացան ցորեն 20,5
Քյավթառլու	7,0	6,5	7,5	5,8	7,3	29,1	
Ղզըլղոչ	-	4,3	5,8	4,6	11,6	36,4	բ/Քյաֆթառլուի փորձադաշտի աշնանացան ցորեն 17,9
Մոլլա-Գյոկչա	7,2	6,8	6,5	5,0	6,5	-	
Ամասիա	-	5,8	7,2	4,6	11,6	29,1	
Թալին	7,3	3,9	5,8	2,6	4,4	21,9	
Հաջի Խալիլ	-	4,3	6,5	2,9	8,7	29,1	
Միջինը	7,2	5,3	6,9	4,5	8,1	32,6	

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ.9, գ.1, գ.5,թ.1-2.

Աղյուսակ 2-ից երևում է, որ աշնանացան ցորեն ցանել են Դուզքյանդի, Քյավթառլուի, Մոլլա-Գյոկչայի և Թալինի գավառակներում, իսկ գարնանացան՝ բոլոր գավառակներում: Գարնանացան ցորենի համեմատաբար բարձր բերքատվություն ապահովվել է Մոլլա-Գյոկչայի գավառակում 6,8 ց/հա, իսկ ամենացածրը՝ Ղզըլղոչի և Հաջի Խալիլ գավառակներում: Լենինականի գավառում ցորենի մշակության գլխավոր գավառներն են եղել Դուզքյանդի, Քյավթառլուի և Թալինի գավառակները: Աշնանացան ցորենի բերքը 1 հա-ից ստացվել է 16-19 ց ցորեն, իսկ գարնանացանից 12-13 ց[31]:

Գավառը նշված ժամանակահատվածում նաև Հայաստանի գարու և կտավատի մշակության գլխավոր գոտիներից է եղել: 1925-26 տնտեսական տարում բոլոր գավառակներում մշակել են գարի և կտավատ, որտեղ գարու միջին բերքատվությունը 7 ց/հա, իսկ կտավատինը 4,5 ց/հա: Թվարկած մշակաբույսերի արտադրության բարձր ցուցանիշներ են գրանցվել հատկապես Դուզքյանդի և Քյաֆթառլուի գավառակներում:

Այդ շրջանում բուսաբուծության զարգացման վրա ազդող կարևոր գործոններից մեկը եղավ գյուղատնտեսական կրթության գործի կազմակերպումը տարածաշրջանում: Արդեն 1922թ. Ալեքսանդրապոլում բացվեց տեխնիկում, որի գյուղատնտեսության բաժինն ուներ 23 ուսանող: Տեխնիկումի տվյալների փորձառությունն ապահովելու նպատակով գավգործկոմը նրանցից հինին աշխատավարձ նշանակելով ուղարկեց գավառակի գյուղերը: Զուգահեռաբար գյուղական բնակչության համար կազմակերպվում էին նաև գյուղդասընթացներ, որոնց այդ տասնամյակների ընթացքում մասնակցել են հազարավոր մարդիկ:

---

[31] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, գ.1,գ.7, թ.110.*

Աղյուսակ 3

Լենինականի գավառակների 1927-1928թթ. գյուղատնտեսական տարվա փաստական բերքի քանակը(հա)
(ըստ գավառային փորձագիտական հանձնաժողովի տվյալների)

գավառ	Ցորեն		Գարի		Տարեկան		Հաճար	Գարեգրոհ	Կտավատ	Կանեփ	Ծխախոտ	Բանջարեղեն	Ցորենաբեղեն	ընդամենը
	աշնանացան	գարնանացան	աշնանացան	գարնանացան	աշնանացան	գարնանացան								
Դուզջյանը	775,5	10055,6	-	5876	29,2	2,4	-	16806	482,2	46,5	-	83,6	19,1	631,4
Քյավթառլու	-	6957,8		4277	30,4	13,7	20,1	11299	242,3	113,8	-	46,5	24,9	427,5
Ղզոլոզ	-	1587,5		2279	-	-	-	3866,5	169,5	51,8	-	2,2	-	223,5
Մոլլա-Գյոկչա	5,8	9862,3	91,6	5668	21,5	15,1	10,7	15675	885,9	28,4	-	30,4	14,2	958,9
Ամասիա	-	1974,2	-	1795			10,3	3779,5	77,0	1,2	-	-	-	78,2
Թալին	861,6	1512,5	-	1023	-	-	-	3397,1	139,9	14,1	5,9	4,8	8,9	173,6
Հաջի Խալիլ		2301,6		7125	69,5	69,5	28,6	9524,7	245,3	25,2	-	1,8	6,4	278,7
ընդամենը	1645,9	34251,5	91,6	28043	150,6	100,7	69,7	64347,8	2165,1	281,0	5,9	169,3	73,5	2771,8

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ.9, գ.1, գ.5,թ.4

Լենինական քաղաքի մի շարք հիմնարկ ձեռնարկություններ այդ տարիներին ունեցան իրենց գյուղատնտեսական նշանակության հողատարածքները: Այսպես, 1938թ. «Փորձասելեկցիոն» կայանն ուներ 302,9 հա, թռչնաբուծարանը՝ 4,0, «Բանջարաբուծական կայանը» 3,8 և այլ ձեռնարկություններ՝ 280.7 հա հողատարածքներ[32]: Քաղաքում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվել են նաև Լենինականի ճակնդեղի խորհտնտեսությունները, որտեղ աշխատողների թիվը 1936թ. կազմել է 119 մարդ, սելեկցիոն կայանում՝ 45, «Անդրերկրամասի» բանվորական մատակարարման բաժնում՝ 85, Լենինականի տեքստիլի խորհտնտեսության ԲՄԲ-ում՝ 66 մարդ: 1939թ. քաղաքի պետական ցանքատարածությունը կազմել է 444 հա, որից 102.3 հա հատկացվել է բանվորներին և ծառայողներին[33]:

Այսպիսով, 1920-30-ական թվականները, հատկապես 1930-ականները Շիրակի բուսաբուծության զարգացման շրջադարձային տարիներ եղան: Հին, ավանդական մենատնտեսական երկրագործությանը փոխարինելու եկան համեմատաբար մեքենայացված կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները: Երկրագործական աշխատանքների մեքենայացումը, հողաբարելավման աշխատանքները, նոր ջրանցքների կառուցումը, գյուղատնտեսական կրթության գործի կազմակերպումը զգալիորեն նպաստեցին բուսաբուծության համախառն արտադրանքի և ցանքատարածությունների աճին:

---

[32] *ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, գ.2, գ.203,թ.12:*

[33] *Նույն տեղում, թ. 28:*

РАСТЕНИЕВОДСТВО ШИРАКА В 1920-1930 гг.

Резюме *А. Бояджян*

1920-30 гг. стали поворотными в развитии растениеводства Ширака. Старое традиционно-единоличное хозяйство заменили механизированные общественные колхозы. Механизация земледелия, улучшение пахотных земель, строительство новых каналов способствовали резкому росту валового продукта. Как социальные слои исчезли кулачество, бедное и среднее крестьянство, а вместо них сформировались коллективы колхозов и совхозов. В Шираке были разработаны новые сферы развития растениеводства, в частности, сахарной свеклы. Резко повысилось выращивание картофеля.

Изменилась земледельческая культура. На смену традиционных методов была введена социалистическая земледельческая культура.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բոյաջյան Արտաշես Գեորգի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ԳՊՄԻ աշխարհագրության ամբիոն,
E-mail.a.boyajyan@mail.ru